ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆՎԻՐԱԿ ՀԱՅՐ ՖԻԼԻՊ ՍԹՈՐՐ ՎԵՆԹԸՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

1998 թվականի մայիսի 5-ին, երեքշաբթի, Ադրբեջանի Հանրապետության մայրաքաղաք Բաքու կատարած այցելության ընթացքում Մայր Աթոռում Քենթրբերիի Արքեպիսկոպոսի նվիրակ Հայր Ֆիլիպ Սթորը Վենթըրն այցելեց Բաքվի Հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որը գտնվում է քաղաքի կենտրոնական մասում, հին քաղաքի արտաքին պարսպից դուրս՝ այգուն հարակից:

Մեր ընթերցողներին հիշեցնենք, որ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում էր թաղված դարասկզբի մեր եկեղեցու մեծագույն հոգևորականներից Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը: Ի՞նչ է հայտնում մեզ Հոգեշնորհ Հայրը:

Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի տապանաքարը

Ինձ չհաջողվեց գտնել հետքեր նրա տապանաքարից, որը գետեղված էր այն վայրում, որն այժմ խոտածածկ մի տարածություն է: Այնտեղ չկային նաև այլ գերեզմանաքարեր (*դատելով լուսանկարներից և իր խոսքերից՝ կարծում ենք, Հայր Ֆիլիպը ճիշտ տեղում չի փնտրել Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի գերեզմանը: Սակայն կարծում ենք, նաև չի բացառվում գերեզմանի պղծված լինելու հանգամանքը*):

Զնայած արտաքին պահպանված տեսքին, եկեղեցին ներկայումս ցավալի տեսարան է ներկայացնում: Եկեղեցու ներսը ամբողջապես այրված է՝ պատերն ու առաստաղը հրդեհից սևացած: Արտաքին պատերը նույնպես կրում են հրդեհի հետքերը, որի ծուխը դրսի կողմից սև հետքեր է թողել նաև լուսամուտների և դռների բարավորներին: Հյուսիսային արտաքին պատի վրա եղած հայկական խաչերը քերված են, իսկ զանգակատան

արևմտյան կողմում գտնվող ցուցանակը ակնհայտ կերպով տեղաշարժված է: Որոշ պատուհաններ շարված են, իսկ մյուսները ծածկված են Ադրբեջանի Հանրապետության ազգային զինանշանով՝ լուսինն ու մահիկը հոգալոյն դրոշի վրա: Եկեղեցու ներքնամասը օգտագործվում է աշխարհիկ նպատակներով. ներսում արևելքից արևմուտք կառուցված է աղյուսե խորդուբորդ միջնորմ: Հարավային մասն օգտագործվում է որպես խաղասենյակ, որտեղ տեղադրված էին խաղասեղաններ, իսկ հյուսիսային մասը հատկացվել է մի շինարարի, որը գաջե կաղապարներ է պատրաստում շենքերի համար:

Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին.
Լուսանկարը Հայր Ֆիլիպի

Ինձ ասացին, որ եկեղեցին սկսվում է վերանորոգվել, բայց ներս մտնել չթողեցին: Իմ դիտարկումն այս պատկերի մասին կատարվել է դրսից և անհնար էր տեսնել նաև եկեղեցու արևելյան մասը, որպեսզի կարողանայի տեսնել, թե ինչ վիճակում է գտնվում նաև խորանը: Այս մի քանի պատկերները հնարավոր եղավ լուսանկարել միայն շենքի արտաքին կողմից: